# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ծրագրային ապահովման մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՆՍԾՏԻԿ-ԲՄԾՁԲ-23/24 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԲՄԾՁԲ-23/24-9 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի հոկտեմբերի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և Տարոն Հարությունյան Ֆ/Ա-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի հոկտեմբերի 23-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել են ծառայության գնման և դրա ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցները, համաձայն՝ 2023 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելվածներ NN 1-ի և 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2023 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԲՄԾՁԲ-23/24-9 ծածկագրով պայմանագրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից ծառայության ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության ձեռքբերման համար ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ**